LSoft

ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

LsBank վեբում

Նույն բանկային համակարգը՝ առանց տեղադրման աշխատատեղերում և առանց հին սահմանափակումների:

Բազան, PL/SQL փաթեթներն ու ձեր լրամշակումները մնում են նույնը: Փոխվում է միայն օպերատորի գործիքը:

Ինչի հետ եք ստիպված հաշտվել այսօր

Տեղադրում ամեն համակարգչում

Նոր տարբերակ՝ սենյակից սենյակ և SS-ի մեկ օր, ոչ թե րոպե:

Oracle-ի կլիենտ ամեն տեղում

Ամեն աշխատատեղ բազային միանում է ուղիղ. տնից և մասնաճյուղից՝ VPN մինչև ՏԲԿՀ:

Միայն Windows

Linux նոութբուք, ղեկավարի պլանշետ՝ անհնար է:

Փոխանակումը՝ բաց պատուհանով

BankMail-ն ու SWIFT-ը աշխատում են աշխատակիցներից մեկի համակարգչում բացված պատուհանում. փակեցին՝ փոխանակումը կանգնեց:

Oracle-ի տեքստով սխալ

Օպերատորի մոտ՝ «ORA-20110: LSB-0110-U_LOAN...», պարզում է ծրագրավորողը:

Կարգավորումները՝ մեկ համակարգչում

Այլ համակարգչում սյունակներն ու ձևերը պետք է նորից կարգավորել:

Բազան՝ «սև արկղ»

Չի երևում՝ որ հարցումն է դանդաղ, որ ձևն է բեռնում բազան:

Սա ձեր թիմի թերությունը չէ, այլ քսանամյա աշխատասեղանային ճարտարապետության հատկություն:

LSoft

Ինչ է փոխվում

ՀԻՆԸ		ՆՈՐԸ
Տեղադրում և թարմացում ամեն համակարգչում	→	**Մեկ հասցե բրաուզերում. նոր տարբերակը դրվում է սերվերում, օպերատորները թարմացնում են էջը**
Oracle-ի կլիենտ և ուղիղ մուտք բազա ամեն տեղից	→	**Բազային միանում է միայն սերվերը. աշխատատեղին պետք է բրաուզեր**
Միայն Windows	→	**Windows, Linux, macOS, ղեկավարի պլանշետ**
Փոխանակումը՝ բաց պատուհանով	→	**Փոխանակումը սերվերային ծառայություն է. փակ ներդիրը չի խանգարում**
Սխալ՝ Oracle-ի լեզվով	→	**Սխալ՝ օպերատորի լեզվով (հայ., ռուս., անգլ.)՝ դիմումի համարով**
Կարգավորումը՝ մեկ համակարգչում	→	**Ցուցակների դասավորությունը՝ սերվերում, հետևում է օգտվողին**
Բազան՝ «սև արկղ»	→	**Դիտարկման վահանակ՝ բազային ամեն դիմում իր տևողությամբ**
Բազայի ազդանշանը երևում է միայն բաց ծրագրում	→	**Ծանուցում ծրագրում և բրաուզերում, նույնիսկ երբ ներդիրն ակտիվ չէ**

LSoft

Գլխավորը՝ ձեր բազայում ոչինչ չենք վերագրել

Ձևակերպումներ, հաշվարկներ, իրավունքներ, ստուգումներ, օրվա փակում՝ ամենը նույն Oracle փաթեթներում, որոնք բանկը քսան տարի կարգաբերել ու լրամշակել է:



Նույն կանչերը

Նոր ծրագիրը կանչում է նույնը, ինչ հինը: Մեր կողմում ոչ մի բիզնես կանոն չկա:

Լրամշակումները մնում են

ԿԲ-ի կամ ձեր արտադրանքի համար փոխված փաթեթն աշխատում է և բրաուզերում:

Որոշում է բազան

Օպերատորը մուտք է գործում իր Oracle հաշվով, ինչպես հիմա. օգտվողների ցուցակ չունենք:

Ձեր ձևաթղթերը

Ձևաթղթերը մնում են բազայում և կառուցվում են ինչպես առաջ. մակետը կարելի է խմբագրել անմիջապես բրաուզերում:

Ճշմարտության երկրորդ աղբյուր չկա. որոշում է բազան, ծրագիրը՝ ցույց տալիս:

LSoft

Կառուցվածքը

Չորս օղակ, և բիզնես տրամաբանությունը միայն վերջինում է: Հետո ավելացվողը միանում է նույն սերվերին և անցնում նույն ստուգումները:

Աշխատատեղ

- Միայն բրաուզեր
- Գլխամաս և մասնաճյուղեր
- Հայերեն, ռուսերեն, անգլերեն

→

Առջևի սերվեր

- Միակ արտաքին հասցեն
- HTTPS
- Windows կամ Linux

→

LsBank սերվեր

- Մուտք Oracle հաշվով
- Թույլատրված կանչերի ռեեստր
- Տպում՝ PDF, Excel, Word
- Ֆոնային գործեր և փոխանակում

→

Ձեր Oracle բազան

- PL/SQL փաթեթներ՝ անփոփոխ
- Ձևակերպում, իրավունքներ
- Ձևաթղթեր

Նույն սերվերին միանում են հաջորդ մոդուլները

- Ինտերնետ բանկ
- Մոբայլ բանկ
- Գործընկեր՝ հարկ, փոխանցում, վճար
- Քարտեր, SMS, փոստ, ծանուցում

Ոչ մի մոդուլ բազա ուղիղ չի գնում. իրավունքները, մատյանը և հաճախության սահմանը ընդհանուր են:

LSoft

Մեկ API՝ ծրագրի և ձեր համակարգերի համար

Ծրագիրն ինքն աշխատում է նույն API-ով, որը կարող են օգտագործել բանկի համակարգերը: Այլ կանոններով առանձին «ինտեգրացիոն» մուտք չկա:



Նույն մուտք և իրավունք

Oracle հաշիվ. ինչ թույլատրված է օպերատորին, թույլատրված է և նրա հաշվով համակարգին:

Պարզ HTTPS և JSON

Միանում է ցանկացած լեզվից և հարթակից, Oracle դրայվեր պետք չէ:

Միայն հայտարարված կանչեր

Կամայական հարցում կամ ընթացակարգ դրսից չի կատարվի:

Նկարագիրը՝ ծրագրի ներսում

Ամեն կանչ՝ հարցման և պատասխանի օրինակով: Ինտեգրատորը փաստաթղթերի չի սպասում:

Ինչ կարող է ծրագիրը, հասանելի է և ձեր համակարգերին՝ նույն իրավունքով ու մատյանով:

LSoft

Ստուգված է ձևակերպումներով, ոչ թե խոսքերով

Բանկային համակարգում ամենապատասխանատուն փաստաթուղթն է՝ դրանից են ծնվում ձևակերպումները: Ուստի ստուգում ենք ոչ թե «կարծես աշխատում է», այլ համընկնումը հին ծրագրի հետ:

1

Փաստաթուղթ

Իրական, հին ծրագրով անցած ամիս ձևակերպված:

2

Ձևակերպում ենք

Նույնը մուտքագրում և ձևակերպում ենք նոր ծրագրում:

3

Համեմատում ենք

Տեսակ, հաշիվ, արժույթ, գումար՝ տող առ տող:

Համընկան՝ այս տեսակը բրաուզերում ձևակերպվում է նույն կերպ, ինչպես այսօր:

Համեմատումն արվում է բանկի թեստային բազայում՝ ըստ փաստաթղթի տեսակների, սկսած ամենահաճախներից: Բացի այդ, ամեն հավաքում անցնում է 928 ավտոմատ ստուգում:

LSoft

Թվերով

277

գործող Էկրան (ձև)

928

ավտոմատ ստուգում ամեն հավաքման ժամանակ

2059

բանկի գործող ձևաթուղթ

3 ինտերֆեյսի լեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն

22 ձևավորման թեմա

4 հաշվետվության շարժիչ. Excel՝ առանց Office-ի

Ստուգումներ՝ 483 սերվերի թեստ · 421 կլիենտի թեստ · 24 համաձայնեցման ստուգում հավաքման ժամանակ: Թվերը՝ 20.11.2026 դրությամբ:

LSoft

Անվտանգության համար

Գաղտնաբառ չի պահվում

Սերվերի հիշողությունում՝ սեսիայի ժամանակ. ոչ բրաուզերում, թոքենում կամ մատյանում:

Ընթացակարգ չի երևում

Նշում է բանալին. ինչ կանչել և ինչ իրավունքով՝ որոշում է սերվերի ռեեստրը:

Դրսից SQL չկա

Ոչ մի մուտք բրաուզերից հարցման տեքստ չի ընդունում: Անծանոթ բանալին չի կատարվում:

Որոշում է Oracle

Ինչպես հիմա: Առանձին ստուգում պահանջող իրավունքների համակարգ չենք ստեղծել:

Տեսանելի աշխատատեղ

Փոփոխությունների մատյանում՝ օպերատորի համակարգիչը, ոչ թե ընդհանուր սերվերի անունը:

Սեսիայի սահմանափակում

3 ժամ՝ առանց աշխատանքի, 12 ժամ՝ մուտքից. մուտքի փորձերի թիվը սահմանափակ է:

LSoft

Անցում՝ առանց բանկը կանգնեցնելու

1

Երկուսը զուգահեռ

Միաժամանակ, մեկ բազայում և նույն փաթեթներով: Հինը՝ առանց մեկ ուղղման:

2

Ըստ մասնաճյուղի

Մեկ մասնաճյուղը փորձարկում է մեկ շաբաթ, մյուսներն աշխատում են ինչպես առաջ:

3

Հետադարձ ամեն օր

Հին ծրագիրը մնում է, տվյալները ընդհանուր են:

4

Որոշում է բանկը

Հին ծրագիրն անջատվում է, երբ բանկն ինքը որոշի, որ պատրաստ է:

«X» օր չկա: Կա բրաուզերում աշխատողների աստիճանաբար ընդլայնվող շրջան:

LSoft

Ինչ է պետք բանկից

Հավելվածի սերվեր՝ Windows կամ Linux	Վեբ-հավելվածն ու API-ն աշխատում են այստեղ. աշխատատեղերում ոչինչ տեղադրել պետք չէ
Oracle 12 և բարձր (սերվերում՝ կլիենտ 12.2)	11g-ով բանկերի համար 12-ին անցումը պարտադիր է
Բազայի պատճեն՝ թեստերի համար	Ձևակերպումների համեմատում և փորձնական աշխատանք
Բանկի մեկ SS մասնագետ	Մուտքեր, փոխանակման թղթապանակներ, սերտիֆիկատ, փաթեթների հարցեր
Ձեր լրամշակումների ցանկը	Որ ոչինչ չկորչի՝ դրանք համեմատում ենք առաջինը

Թեստային միջավայրը տեղակայվում է սցենարներով մեկ օրում. այն կրկնելի է և կախված չէ մեկ մարդու հիշողությունից:

LSoft

Փուլեր

1 · Հետազոտում	2 · Թեստ	3 · Առաջին մասնաճյուղ	4 · Տարածում	5 · Հինի անջատում
Լրամշակումներ, փոխանակումներ, հին ձևաչափի ձևաթղթեր	Ձեր բազայի պատճենով, ձևակերպումների համեմատում ըստ տեսակների	Օպերատորները բրաուզերում են, հին ծրագիրը՝ կողքին	Այլ մասնաճյուղերն ու ձևերը՝ ըստ պատրաստության	Բանկի որոշմամբ. միաժամանակ բազան՝ Unicode-ի
մեր թիմը և բանկի SS բաժինը	**մեր թիմը**	**բանկի օպերատորները և մեր թիմը**	**տեմպը՝ բանկինը**	**մեր թիմը և բանկի SS բաժինը**

Ամեն փուլի ժամկետը նշում ենք հետազոտումից հետո. լրամշակումների ծավալը ամեն բանկում այլ է, և շաբաթներ խոստանալը՝ դրանք չտեսած, ազնիվ չէր լինի:

LSoft

Ինչ է բացվում հետո

Բազան՝ Unicode

Հայերենն այլևս միաբայթ չէ. վերանում են մուտքի սահմանները և սյունակների բաժանումն ըստ լեզվի:

Oracle՝ մինչև 23ai

Բազայի տարբերակն այլևս կախված չէ հին կլիենտից:

ԱԲ՝ ձեր պարագծի ներսում

Փաստաթուղթ ինվոյսից, նման գործառնություններ, կցորդների որոնում ըստ բովանդակության:

Արտաքին համակարգերը՝ API-ով

Այսօր ուղիղ բազա գնացողները. ընդհանուր իրավունքներ, մատյան, հաճախության սահման:

Մասնաճյուղեր և հեռավարը

Առանց VPN-ի մինչև բազա. աշխատատեղին պետք է միայն բրաուզեր:

LSoft

Հաջորդ քայլը

1

Ցուցադրություն

Մեկ ժամ, ապանձնավորված բազայով. մուտք, գործառնական օր, փաստաթուղթ, ձևաթուղթ, փոխանակում:

2

Հետազոտում

Երկու շաբաթ՝ լրամշակում, փոխանակում, ձևաթղթեր: Ելքում՝ պլան և ժամկետներ:

3

Թեստավորում

Բազայի պատճենով՝ ձեր փաստաթղթերի ձևակերպումների համեմատմամբ:

Անցման որոշումը բանկը կայացնում է երրորդ քայլից հետո՝ տեսնելով իր փաստաթղթերը բրաուզերում:

Ճարտարապետության ակնարկը SS ծառայության համար՝ կից փաստաթղթում:

LSoft

Ինչ տեսք ունի



Մուտք համակարգ



«Խնդիրներ» մոդուլը՝ հսկում, գործարքներ, պայմանագրեր



Ծրագրի էջերը՝ էկրաններ, բազային դիմումներ, տեղեկատուներ

Պատկերները՝ թեստային միջավայրից. բանկի անվանումն ու հաճախորդների տվյալները թաքցված են:

LSoft